

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հայր և որդի — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Դամակ
վերին-Աղուլիսից: Դամակ Մեծ-Վարաքլիսից: Դա-
մակ Երեւանից: Դամակ Դամասկոսից: Դերբին Լու-
սին: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիֆլիս: Չէր-
նոօրիս: Արտաքին լուրեր: ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ԳՆԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՅԻ ԵՍԸ

Հայը իր ամբողջ կեանքը ամեն ներքին
և աններքին ճանապարհներով հարստա-
նում է, գիտում է կարողութիւն, շատե-
րին իր նմաններից հարստահարում է, կո-
ղտուում է: Բազմաթիւ ընտանիքներ քանդ-
վում, աղքատանում են մէկի գրպանը լց-
ներում համար, բազմաթիւ բանւորներ, ծա-
ռաներ, մշակներ, գիւղացիներ իրանց ամ-
բողջ կեանքը գրկանքներ են կրում, մէկի,
հարստահարողի ձեռքում գործիք դառնա-
լով... Մէկը անասելի կերպով հարստանում
է շատերին աղքատացնելով:

Բայց ահա ծերութիւնը հասնում է, մահ-
վան բոլոր մոտենում է. հարստահարողի
խիղճը սկսում է տանջել, նա սկսում է վա-
խենալ Աստուծու դատաստանից, նա սկսում
է մտածել իր հոգու փրկութեան մասին:

Կեանքի ժամանակ նա ամենակ էր ամեն
բան փայլում, իսկ իր նմաններին ամեն
բանից գրկում, — և մեռնելով նա դարձեալ
մտածում է իր անձի, իր հոգու փրկու-
թեան վրա, իր եսի վրա: Կենդանութեան
ժամանակ նա ուրիշի հաշուով, ուրիշներին
կողովակելով էր ապրում և այն աստիճան
եռական, ինքնասեր ու յանդուգն է, որ հա-
ւատացած է թէ մեռնելուց յետոյ էլ իր հո-
գին փրկութիւն կը ստանայ Աստուծու ա-
ռած, հոգեհանգիստներ կատարել տալով
աղքատների ձեռքից խլած, ուրիշներից կո-
ղտած գումարներով:

Կրա մէջ երեւում է հայի ետք: Կենդա-
նութեան ժամանակ նա ապրում էր ուրիշ-
ների հաշուով, մեռնելուց յետոյ նա ուզում
է իր հոգու փրկութիւնը ստանալ ուրիշնե-
րի հաշուով:

Նոյն իսկ այս մարդիկ, որոնք իրանց բո-
լոր փառութիւններին հետ աստուածապաշտ
են, որովհետեւ վախենում են երկնային դա-
տաստանից, թող յիշեն աւետարանի խոս-
քը, թէ մարդու գործերը պէտք է փրկեն
նրան:

Իսկ այդ տեսակ եռական, ազա՛հ և հա-
րստահարող մարդկանց կեանքն էլ ամեն
բարի գործերից զուրկ է, մարդկութեան և
իրանց ազգի համար ապարդիւն է, վերջա-
պէս իրանց մահից յետոյ էլ ոչինչ գործ եր
չեն թողնում իրանց եղբայրներին: Կենդա-
նութեան ժամանակ նրանք միայն մտածում
են իրանց անձի բաւականութեան վրա, ի
զնառ ուրիշների, մահվան բոլորի իրանց
մեղաւոր հոգու փրկութեան վրա, առանց
որ և է օգուտ տալու իրանց նմաններին,
առանց մտածելու իրանց նմաններից կողպ-
ածի մի մասը գտնել նրանց կրկին վերա-
դարձնելու:

Եթէ ճշմարիտ է որ մեր գործերը մեզ
պէտք է փրկեն, — ինչքան գործ կայ կատա-
րելու այս բոլորի մեր ազգի մէջ: Եթէ

ճշմարիտ աստուածապաշտ էք, փրկեցէք
ուրիշներին, որպէս զի դուք ինքներդ փրկ-
վէք: Յայտնի է որ մարդկութեան մէջ յան-
ցանքները մեծ մասամբ ծնվում են երկու
չարիքներից՝ չքաւորութենից և աղիտու-
թենից:

Թող մտածեն որ կտակելով իրանց կա-
րողութիւնը յօգուտ մի բարեգործական
հիմնարկութեան, հիմնելով աղքատանոց,
անկեղանոց, կամ մշակների համար մի փո-
խատու զանաւարան, բանւորների համար
մի խնայողական ընկերութիւն և այլն, մեր
հարուստները կազատեն բազմաթիւ մարդ-
կանց չքաւորութենից, ուրեմն կը փրկեն
նրանց յանցանքներ գործելուց: Կրանով մի-
թէ ձեռ հոգին աւելի լաւ չի փրկվի, երբ
դուք ուրիշներին հոգիները կը փրկէք:

Թող մտածեն որ կտակելով իրանց կարո-
ղութիւնը յօգուտ լուսաւորութեան գործի,
գաղութիւնի, գրագիտութեան տարածման և
այլն, մեր կտակողները կազատեն ժողովրդի
մի մասը աղիտութենից, իսկ աղիտութե-
նից միացած չքաւորութեան հետ մեծ մա-
սամբ ծնվում են այլ և այլ բարեպաշտ
ախտեր, յանցանքներ: Եթէ ձեռ հոգին ա-
ւելի լաւ չէք փրկի, փրկելով ուրիշների
հոգիները:

Բայց ոչ. հայը, նոյն իսկ այս բոլորի,
երբ այդքան գործ կայ կատարելու հայու-
թեան համար, դարձեալ չէ մտածում ընդ-
հանրութեան վրա, այլ միայն իր անձի
վրա: Կենդանութեան ժամանակ նա ամեն
բան զրհում, ոտնակոխ էր անում իր անձի
բաւականութեան համար, մեռնելով էլ նա
մտածում է միմյան իր մեղաւոր հոգու
վրա, որին ուզում է փրկել ուրիշների հա-
շուով, ուրիշներից կողպակելով փողով: Հայի
համար իր ետք ամեն բանից վեր է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Յունվարի 5-ին

Վերջապէս հոգաբարձութիւնը իր պաշտօնը
ստանձնելուց ուղիղ ասան և մէկ ամիս յետոյ
բարեհաճեց մի ժողով կազմել ուսումնարանի հա-
մար երեսփոխաններ ընտրելու նպատակով: Եւ
ես կարծում եմ, որ այս անակնկալ ժողովի պատ-
ճառը (Մշակի) մէջ տպւած լուրն էր միայն, որ
մեծ ներգործութիւն էր արել հոգաբարձութեան
վրա: Երբեմն երբեմն մտաբերել հասարակաց գոր-
ծիչները պակասութիւնները և քննարկել նրանց
գործունեութիւնը: Իր նշանակութիւնը և օգուտը
ունի: Լրագրական խօսքը մեծ նշանակութիւն և
ազդեցութիւն է անում առհասարակ ամեն տեսակ
մարդու վրա:

Այսպէս ամիս 3-ին՝ կիրակի օրը հոգաբարձու-
թիւնը Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի
քահանայ մի ընդհանուր ժողով էր հրաւիրել, որի
նպատակն էր, ինչպէս վերը յիշեցի, ուսումնա-
րանի համար երեսփոխաններ ընտրել միմյանց:
Ես ոչ ուսումնարանի բարերար լինելով և ոչ էլ
երեսփոխան, ժողով չէի հրաւիրված, բայց ինչպէս
մի քանի ծանօթներ ասեցին, ժողովը շատ սա-
կաւարկ է եղել, այսինքն միմյանց 27 մարդուց
բաղկացած: Երեսփոխանները առհասարակ ընտր-
վում են ընդհանուր ժողովով և այդ հիման վրա էլ
հոգաբարձութիւնը ընդհանուր ժողով էր հրաւիրել:

Թող 60 մարդ, բայց տարաբաղադրաբար միայն կէսն
է եղել ներկայ: Այս երեւոյթը ինքն ըստ ինքեան
շատ անմիջականաբար է և օրանից արդէ երեւում
է, որ մեր հասարակութիւնը անտարբեր աչքով է
նայում ուսումնարանի վրա ու կարծես երես է
դարձրել նրանից... և այդ այն հասարակութիւնն
է ամուտ, որը մի ժամանակ ոչինչ չէր խնայում
նրա յառաջդիմութեան համար...

Իմ կարողութիւնից բարձր համարելով այս ան-
միջական երեւոյթի պատճառի բացատրութիւնը, —
ես կամենում եմ Աղուլիսի ընտրութիւնների մա-
սին առհասարակ մի քանի խօսք ասել: Մի մարդ,
որ շատ ընդունակ է մի պաշտօնի համար, նրան
սեպնում են, մի այլ մարդ, որ բոլորովին տգէտ
է և անկարող մի որ և է պաշտօն կատարել՝
ընտրվում է... Այս երեւոյթը կարելի է բացատ-
րել երկու պատճառով: — առաջին՝ որ ուժ հարուստ
է՝ լինի նա ամենավերջին տգէտը և անկարողը —
նա աղուլիցու կարծելով խելօք է և ընդունակ
պաշտօն վարելու, դրա հակառակ ուժ աղքատ է —
լինի նա ամենաեղբայր ուսումնական — նա տգէտ
է, անկարող է, ուրեմն և չէ կարող ընտրվել ու
պաշտօն վարել... Երկրորդ պատճառը այն է, որ
աղուլիցին մի որ և է ինչ գործի համար, հէնց օրի-
նակի համար ուսումնարանի երեսփոխան ընտ-
րելիս՝ նա ուսումնարանի շահը չունի աչքի առաջ
այլ բարեպաշտ ու աղքատներ: Օրինակ մէկը իր
փեսային է քուէարկում, որ բացակայ է Աղուլիսից,
կամ իր անորդը, միայն քուէարկում է իր եղբո-
րը, որդուն, հորը, քուտուն, քրոջ որդուն և այլն
և այլն...

Մի պարոն էլ հետեւեալ է առաջարկում ժո-
ղովին: — Հայն բոլոր անդամներին էլ երեսփո-
խան ընտրելը, — օրինակ մենայն Մարկոսեան չը
լինի երեսփոխան՝ այլ եղբայր Մարկոսեան, որ-
պէս զի տան մի անդամի բացակայ լինելուց միւս
անդամը կատարէ նրա պաշտօնը... Երեւելի, միտք
և հիմանով առաջարկութիւն: Հասարակութիւնը
Մարկոսին ընդունակ համարելով՝ երեսփոխան է
ընտրում, իսկ Մարկոսի եղբայր Կիրակոսը մի-
տգէտ մարդ է և բոլորովին անընդունակ երես-
փոխանութեան համար. ուրեմն պարոնի կարծիքով
այդ տգէտի պէտք է յանձնել ուսումնարանի
ղեկն ու ապագան... Ժողովը բարեբաղադրաբար
մերժում է այդ առաջարկութիւնը:

Ընտրվեցան 19 երեսփոխաններ, — բացի հոգա-
բարձութիւնից և կանգնողաներից: Այժմ ուսում-
նարանի վարչութիւնը ըստ բաւականին կազ-
մակերպվեց: Հոգաբարձութեան ոյժերի վրա
աւելացան նոր և թարմ ոյժեր: Յուսանք, որ հո-
գաբարձութիւնը և երեսփոխանը ձեռք-ձեռքի
տուած բարեկարգեն ուսումնարանի ապագան և
աւելի ևս հաստատ հիմքի վրա դնեն նրան: Յու-
սանք և սպասենք:

Մի անգամ գուցէ առիթ ունենամ վերադառնալ
ուսումնարանական հարցին:

Մեղանում միաժամանակ քննվում և կարծես
թէ իրագործութիւն են կամենում ստանալ Լու-
կու Նշանաւոր հարցեր, — փոստային կայարան
հիմնելու և բժշկի բերելու հարցերը: Վերջի
վերջոյ աղուլիցին երկար տատանվելուց յե-
տոյ համաձայնից այդ երկու հարցի մասին
ոչինչ չը խնայել և ամեն կերպ աշխատել այդ
գիւղիցի ձեռնարկութիւնները գլուխ բերելու:

Փոստային կայարան հիմնելու հարցի կարեւորու-
թիւնը ինքն ըստ ինքեան հասկանալի է աղուլի-
ցիներին, իմ կրկնելը բոլորովին աւելորդ է:
Իսկ բժշկի ունենալու հարցը ամենից վեր է,
նշանաւոր և ամենամահաբաժնի: Բժիշկի մասին
արդէն ստորագրութիւն է բացված և մօտ 400 ռ.
փող է ժողովված: Ամեն հասարակութիւն իր
հոգեց և բժշկի, օրինակ, այդպէս և և Աղուլիսը: Չանգան
Յովսէփին, Իվաններ, Միլոսին և Կարապետ-
ների արգելք և խոչընդոտ են կամենում լինել չը
ստորագրելով թերթին, բայց հասկանալի է որ
այդպիսիները միմյան իրանց են խայտառակում
և ուրիշ ոչինչ անել չեն կարող...

Աղուլիցին չը դիտեմ անհոգութիւնից թէ ծու-
լութիւնից, սովորութիւն ունի առհասարակ մի
միտք յայտնել — օրինակ փոստային կայարան
հիմնելու հարցը, — այդ գործը առաջ տանելու
համար մարդիկ ընտրել և սուս ու փուս իր տե-
ղում նստել... աղուլիցին կարծես ընդունակ է
միմյան լաւ մտքեր և օգուտաւոր գործեր ծնելու
մէջ, իսկ իրագործել մտածածը, — այդ նրա գործը
չէ: Յանկալի է որ այդ հարցերը ևս միւս մեր
հարցերի նման լոկ հարցեր չը մնան, այլ իրա-
գործիկ յօգուտ համար հասարակութեան:

Յունվարի 2—3 գիշերը ժամը 3-ին զգալի եղաւ
այստեղ երկրաշարժի մի շատ սաստիկ և երկարա-
տե ցնցում: Այս վերջի ցնցումը միւս բոլոր և-
ղածներից ամենասաստիկն էր, ախպէս որ շատե-
րին բնից դարձեցին և սարսափի մէջ էր
ձգել...

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Յունվարի 31-ին

Առողջապահութեան գլխաւոր պայմաններից
մէկն էլ ջուրն է: Կան տեղեր, ուր միլիոններ են
միտում առողջարար ջուր ձեռք բերելու համար:
Կան տեղեր ուր մաքուր ջուր ունենալու համար
մինչև իրանց կեանքը չեն խնայում, որովհետեւ
ստանց ջրի՝ երկիրը անապատ է: Եթէ ջուրը ա-
ռողջարար ու մաքուր է, նրա խմողները կարճ
միջոցում կորցնում են իրանց առողջութիւնը, եւ-
թարկվելով զանազան տեսակ անբուժելի հիւան-
դութեանց: Բնութիւնը պարզեւ է դարաբլիւնեցի-
ներին մի ամենապատեական և առողջարար ջուր,
որ անտառախիտ ձորերի միջից սկզբնաւորվելով,
անցնում է գիւղը: Բայց տարաբաղադրաբար այս
հաղուաղիւտ և առողջարար վճիտ առուակի նշա-
նակութիւնը մեր զարաբլիւնեցի այգեքան քիչ են
հասկանում, որ ամեն օր անխնայ ամեն տեսակ
զարկելով աղը այս անմահական ջրի մէջ թա-
փելով, կեղտոտում փայցնում են ջուրը: Այն տը-
ները՝ որոնք չլինված են առուակի երկարութեամբ,
ամեն օր՝ բոլորն էլ տաւարի աղը առուակի մէջ
են թափում: Խմելիս խելոյն մարդի սիրտը խառ-
նում է: Այս բոլորից արդ առուակի երկու ամե-
րում, մէկ ծայրից մինչև գիւղից զուրս, տաւարի
աղերը իրար վրա դնված են և ամեն օր ամեն
բոլոր լուծվելով ջրի մէջ, կատարելապէս թունա-
ւորում են նրան: Ուղղակի գիւղի տանտերի
պարտականութիւնն է, որ ստիպէ գիւղացիներին
մաքրել առուակի ամբիւրջ հին աղերը և բոլորո-
վին արգելել այսուհետ ջրի մէջ աղը թափելը:
Չարմանալի ծուլութիւն. թող մի երկու քայլ էլ
առաջ գնան և ուրիշ տեղ թափեն այդ զարաշո-
տութիւնները:

Մրանց մի երկու ամիս առաջ զարաբլիւնեցի
երկու եղբայրներ, գիւղերը, զարաբաղադրական չի-
նութեան վերին յարկից քերանները ազնուա-
բար սղոցով կտրատել, պատի քարերն էլ քան-
դել տարել են և աղ դաւա իր աւա իր իրանց տունը
չինել: Բայց այդ աղ դաւա իր աւա իր գոգերը
շատ շուտով յայտնվեցաւ. աղ դաւա էր գոգերը
բռնվեցան: Կեւ այս բաւական չէ: Յունվարի 13-ին
հասարակական վճիտ կայացրին և ընդհանուր հա-
մաձայնութեամբ վճեցին որ ազնու իւր գոգերը
իրանց գողացած քերանները իրանց տան վրայից
հանեն և կրկին յանձնեն զարոյցին որոշված տու-
գանքի հետ:

Յունվարի 28-ին Վարաբլիւսի առաջաւոր մարդ-
կերանից հրաւիրված էին պ. փրոմանցի տա-
նը ընթերցի, որից յետոյ պ. փրոմանցի առա-
ջարկութեամբ ստորագրութիւն բացվեց պատուելի
հիւրերի մէջ, որ և իսկոյն ամենայն համակրու-
թեամբ ընդունվեցաւ բոլորի կողմից և ստորագրե-
ցին 525 ռուբլ, որից մօտաւորապէս 200 ռ. իս-
կոյն հաւաքվեցաւ, մնացածն էլ հաւաքվում է: Գ.-
փրոմանցը այս փողերով ուզում է ծածկել տալ
օրիորդաց դպրոցի համար այն երկարականի աւե-

բալ մնացած չորս սենեակը, որ նկարագրված էր «Մշակի» անցեալ տարվայ № 216 մէջ: Փիրու-մնացի շնորհիւ 20—30 տարվայ աւերակները, որոնք գողերի պիղծ ձեռքերով քանդակուի մի օր բոլորովին անհետացած կը լինէին, դարձեալ կենդանութիւն պիտի առնեն և կրթութեան տաճարներ պիտի դառնան: Պ. Փիրումնացի համար դա մի անմահական յիշատակ կը լինի:

Յօդուտ այս աւերակների շինութեան նախա-տունների մէջ առանձին շնորհակալութեան ար-ժանի է պ. Ղազար Աղաբաբեանը, որ ինչպէս ամեն բարեգործութեանց մէջ, այնպէս էլ այժմ, իրանից նիւթական միջոցներով 10 անգամ բարձ-րանից շատ տուեց: Խորին շնորհակալութիւն նախ պ. Փիրումնացին, որ գործի սկզբապատճառն է և յետոյ շնորհակալութիւն բոլոր նախապատե-րին, որ համակրեցին այդ ազգայնական գործին և չը խնայեցին իրանց օգնութիւնը:

Արդէն վճարված է, օրերը մի փոքր տաքացան թէ չէ, հոգաբարձութիւնը կը սկսէ օրիորդաց դպրոցի շինութիւնը և առանց աշխատութեան հե-տեալ ուսումնական տարվայ սկզբում օրիորդաց դպրոցը կը տեղափոխվի նոր շինութեան մէջ:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Փետրվարի 3-ին

Թէ ինչ աչքով է նայում և ինչ կարծիք ունի երևանի հայ հասարակութիւնը «Մշակի» վրա, այդ մասին ինքն իրան վկայում է այն փաստը թէ այստեղից «Մշակին» ուղարկված շնորհաւորական ուղերթին ստորագրել էին մօտաւորապէս 200 մարդ քաղաքի ամենաբնակիչ հասարակութիւնից: Այդ երեւոյթը, կարծում եմ, պարզ ապացոյց կա-րող է համարվել, որ «Մշակը» վայելում է այստեղ սէր և ընդհանուր յարգանք. ես ակամատես էի, երբ բժիշկ Տիգրանեանը առաջարկում էր ստորա-գրել թղթին, թէ որպիսի ոգևորութեամբ և աշխոյ-ժով կատարում էին յարգելի բժիշկի պահանջը: Այս, թիֆլիսում միայն մի քանի պարոնների աչքում փուշ է երևում «Մշակը»: Բայց թող պարոնները դուրս գան իրանց բնակարանից և չընեն հայա-բնակ տեղեր, խօսեն հայի հետ և կը տեսնեն որ իրանց յարձականքով «Մշակի» վրա աւելի էլ նպաստեցին նորա յառաջադիմութեանը: Երեա-նում միջին թիվ տարէր 100 օրինակ «Մշակ» է ստացվում, այդ երեւոյթն էլ ոչ պակաս ապա-ցոյց կարող է լինել մեր խօսքերին: Եթէ հայ հա-սարակութիւնը այդպէս ջերմ սրտով արտայայ-տում է իր համակրութիւնը այդ լրագրին, ես հաւատարմ եմ որ նրա խորագրերը աւելի ջերմ և եռանդոտ սրտով առաջ կը տան իր սկսած գոր-ծը: Բաւական համարելով այս քանի մի խօսքը, դառնում եմ այժմ մի այլ հարցի:

Կէս տարուց աւելի կը լինի, որ երևանի թեմա-կան առաջնորդի պաշտօնը վարում է Ստեփանն Գեորգ վարդապետը: Եթէ չեմ սխալվում այդ մարդը հանգուցեալ Ստեփանոս Կալիստոսից յետոյ առաջինն է, որ ամենքը յարգանքով են խօսում դորա մասին: Ներկայ առաջնորդը ստա-նում է Լեւոնիանից տարեկան 600 ռուբլի ուճիկ, բացի այդ չնչին ուճիկը նա չունի եկամուտների ոչ մի աղբիւր: Չը դիտեմ ինչու Լեւոնիանի կա-ռավարութիւնը ի նկատի չէ առնում մի հանգա-մանը, որ երևանի առաջնորդը որպէս մի նշանա-ւոր թեմայի ներկայացուցիչ մի մարդ, որը յարաբերու-թիւն ունի նահանգապետի, դատարանի նախա-գահի, քաղաքապետի և այլ բարձրաստիճան ան-ձանց հետ, տարեկան 600 ռ. ուճիկը չէ կարող լինել դորա ամենամեծ ծախսը պահանջներն ան-գամ: Եթէ այսօր երևանի առաջնորդը կարողա-նար մի բարձրաստիճան հիւր ընդունել մի օրի-նաւոր կերպով դարձրելով սենեակում, կամ նա միջոց ունենար պատշաճաւոր քաղաքավարական ձևերը կատարելու, այդ պատիւը նախ և առաջ կը վերաբերվէր Լեւոնիանին և ապա նրա այտու-ղի ներկայացուցչին:

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԵՐՈՒՑ

Յունվարի 31-ին

Համարու այն հիմնարկութիւններից, որոնք նպատակ ունենում են մեր մտաւոր կեանքի յառաջա-դացութեանը, գլխաւորներից միւրը կարող է հա-մարվել տեղի քաղաքային ուսումնարանը: Ի նը-կատի ունենալով յիշեալ ուսումնարանի յօդուտ

բաղադրիւն արած յառաջադիմական քայլերը և այն որ նրա ուսանողութեան մեծամասնութիւնը կաղ-մում են հայ-պատանիներ (այն է 200 աշակերտնե-րից 130 հայեր), արժան եմ դատում մի հարեանցի հայեացք գցել նրա վրա—Յայտնի է ամենին, որ Կովկասը առհասարակ կարօտութիւն է դրում գիւղական ուսուցիչներին մէջ, քանի որ նա չունի այնքան սեմինարիաներ, ուր կարող էին պատ-րաստվել մասնագիտ մանկավարժներ. ուստի մեր գիւղական ուսումնարանների զեկը բոտ մեծի մասին կառավարում են այս ու այն ուսումնա-րանների ստոր դատարան թերութա աշակերտներից: Ես, որ այդ ինքնակալ ուսուցիչները փո-խանակ իրանց սաների մօտաւոր և բարդական ընդունակութիւններին ու ձգտումները դարձացնե-լու, նրանց պատշաճաւոր ուղղութիւն տալու, անցիտակցարար մեղքում են մանուկների բնա-կան ընդունակութիւնները տակաւին իրանց սաղ-մում: Այս հանգամանքները, նախատեսելով քա-ղաքային ուսումնարանի մանկավարժական խոր-հուրդը, կառավարութեան թիւյրութեամբ, 1880 թ. թվականի սեպտեմբեր ամսից, բացեց մանկավար-ժական բաժիններ, ուր պատրաստվում են ծխա-կան ու գիւղական դպրոցների դաստիարակիչներ: Հէնց այդ ամսում, տեղական ինտելիգեն-ցիան, որ բարեհաճել էր շնորհ ընել քաղ. ու-սումնարան, նրա նոր շինութեան օծման հանդի-սին, կազմեց մի ընկերութիւն նոյն ուսումնարա-նի չքաւոր ուսանողներին օժանդակելու: Թէ որ-քան անհրաժեշտ է այդպիսի մի ընկերութիւն, աշխատանք պարզեց: Մեր ծնողներից շատերը, չունենալով նիւթական միջոցներ իրանց դասա-նիւրին ամենատարակական կրթութիւն տալու, բո-տիպում են ընդդէմ իրանց համոզմունքին, տե-ղաւորել իրանց որդուն մի աղետ արհեստաւորի, մի փախաւու չարչի մօտ, կամ բոլորովին անդ-րազեալ թողնել նրան:

Այժմ, շնորհիւ նոր կազմված ընկերութեան, եթէ ոչ բոլորովին, գոնե մի քանիսին կաջողվի վայելել ուսման քաղցր սրտունքներ, և ճշմարիտ, ընկերութիւնը այժմ հոգում է 27 աշակերտների պիտոյքները: Չանցաւ երկար ժամանակ, և այդ ուսումնարանի մօտ բացվեց հասարակարաց դպ-րոց: Ով ապրել է Շամախի և զէթ մի փոքր հե-տադրքութեամբ դիտել է հասարակ ժողովրդի կեանքը, նա, կարծում եմ, համոզված կը լինի, որ շամախցիների մեծամասնութիւնը, բաղկա-ղին երևակայել, որքան անսխալութեամբ են սպասում անդադրողութեանց համահասարակաւ և վաճառականին, և արհեստաւորին, և հասարակ մշակին իր գործունէութեան ասպարեղում: Քաղ. ուսումնարանը չէզոք չը մնաց և այս կողմից և որպէս զի բոլորեանք այդ պահանջները, անցեալ 1881 թ. թվականի դեկտեմբեր ամսից բացեց կիրակ-նօրեայ անվարձ դպրոց կախահանների համար, ուր ամեն մի հասակի մարդ կարող է սովորել մի տարվայ ընթացքում կարգաւ ու գրել թէ հայե-րէն և թէ ռուսերէն: Այս մեր քաղ. ուսում-նարանի 1880—1881 թ. գործունէութեան համա-նօտ նկարագրութիւնը: Պէտք է խոստովանուի, որ նա իր յառաջադիմութիւններով դիտարա-պէս պարտական է իր կառավարչի պ. Լ. Փիւ-րադաբեանիցին, որը ոչինչ չէր անում աշխատու-թիւն չէ ինչպիսի նրան բարեկարգելու համար: Ինչպէս լուր և կամ երբ, պարտք ունի ես մի քանի մտադրութիւններ, որոնց իրագործվելը ամբողջ հոգով փախաւում ենք—Քաղցր է ասել, որ ներ-կայ թվականի յունվար ամսից հայոց թեմական դպրոցը նոյն նպատակով բացել է մի այլ կիրա-կեայ ուսումնարան: Ուրեմն շամախցիները կու-նենան երկու հասարակարաց դպրոցներ: Յանկայի էր որ նրանք կարողանային օրովիկ վերադառնալ հիմնարկութիւններից:

ՆԵՐՎԻՆ ԼՈՒՐԻՐ

ՇՈՒՇՈՒՑ, պ. Ղ. Աղայանիցի ստացանք 60 ռուբլ Բիւրքանի ֆոտոգրաֆիական ժողովածուի երեք օրինակի համար և նոյնպէս 1 ռ. 50 կ. փոստածախս: Այդ փողերը պ. Աղայանից ստա-ցել է պ. պ. Սահակ Թադեւսեանից, Միքայէլ Տէր-Յովհաննիսեանից և հայոց դպրանոցի վար-չութիւնից: Փողը և հասցեները կը հասցնեմ պ. Բիւրքանիին:

Մեր մի ծանօթ օտարազգի քիմիքոս և տեխնիկ, որ իր ուսումը աւարտել է Յիւրիստում, խնդրել է

մեզ յայտնել «Մշակի» մէջ որ կը կամենար տեխ-նիկի պաշտօն ստանալ Բագուի գործարաններից միում: Յանկացողները պարոնի պալմաններն ի-մանալու կարող են Բագուից դիմել «Մշակի» խմբագրութեանը: Նամակները այդ մասին աւելի-լաւ է գրել ռուսերէն կամ գերմաներէն լեզուով, որպէս զի մենք այդ նամակները ուղղակի կարողա-նայինք յանձնել պարոնին:

«Մեղու Հայաստանի» լրագրում կարգում ենք որ մի բազմուցի հայ, Կ. ազգանունով, կտակել է 100,000 ռուբլ Լեւոնիանի վանքին, իր հոգու-թիւ կ'ու թէ և այն համար:

Ստացանք թիֆլիսում ընտելոյ մշակ դասա-կարգին պատկանող պանդուխտ վանքի երիտա-սարդներից 4 ռ. 50 կոպէկ յօդուտ վանի Կենտ-րօնական վարժարանի: Ահա նուիրատուների աղ-գանքները: Աղանեան 50 կ., Կարապետ ԱՖէ-րեան 60 կ., Մանուկ Միքայէան 1 ռ., Մ. Լ. 1 ռ., Միքայ. Վարդանեան 20 կ., Պետր. Գեորգեան 20 կ., Յ. Յ. 1 ռ.: Գումարը 4 ռ. 50 կ.:

Ռուս լրագրիները հաղորդում են, որ «Порт-Дорге» լրագրի հրատարակութեան դադարումն է եղել պատճառով, որ բարձր կառավարչական շըր-ջաններում միտք է յարուցվել վերադնել մամու-լի օրէնքները և թեթեւեղ նրա դրութիւնը:

Քսան ռուբլ գումարով, որ նուիրել են մի քա-նի պարոններ Ղաթարի հայերից, «Մշակի» երկու օրինակ ձեռքաւել մեր կաթին շամախում ու ու-ղեմանք ուղարկելու համար, կուղարկենք մեր լը-րագրի մի օրինակ Մօսկվայի Պետրօվսկի ակադե-միայի հայ ուսանողներին, պ. Ա. Քալանթա-րեանի անունով, իսկ երկրորդ օրինակը Տեղ գիւ-ղի դպրոցին:

Երբորմից ստացած մամուլով նամակից քա-ղում ենք հետեւալը: «Լեւոնի» որ Սանասարեան հայոց ուսումնարանը պէտք է բաղկանայ երեք մասից, ծխականից, երեք պատրաստականով, մի ջնակարից և մի քանի քանակով և մասնա-գիտական կամ լիցէնս ասիական բաժնից, ե-րեք լսարանով: Ուսումնարանի գրադարանին կից կը լինի պարսկական դասընթաց, նրանց համար, ո-րոնք իրանց կը նուիրեն դիտութեանը: Ասում են որ այդպիսիները, ամբողջ օր պարսկերով, այդ-տեղ էլ ձեռք կուտան և կապեն, առանց որ և է կերպով հոգաւու իրանց ապրուստի մասին: Այս մեզ յիշեցնում է հին յունական ձեռարանները:

Լուր ենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբար-ձութիւնը դիտարկութիւն ունի դպրոցի տեսուչ նշանակել պ. Բաճարեանիցին: Շնորհաւորում ենք դպրոցի աշակերտներին: Այն ժամանակ ստիպ-ված կը լինենք ոչ թէ միայն աշակերտներին, այլ և կաշին հաստանայ, կարողանան դիմաւոր Գերմա-նիայում ուսում ստած մանկավարժի ուղղիչ սո-վորութիւններին: Յանկայի է որ վերջը իրանք պ. պ. հոգաբարձուներն էլ չը փշմամբն իրանց արած ընտրութեան մասին, փորձելով մի մի ան-գամ իրանց մէջքի վրա իրանց նորենտի տուղի կրթիչ, չօգտվել ներգործութիւնը:

ՆՈՐ-ԲԱՍՏԱՆԻՑԻՑ մեզ գրում են որ այդ քա-ղաքում կազմվեցաւ նորերումս հայ թատրօնա-ուհիների խումբը երկուսը դպրոցների ուսուցիչ-ներից և հոգաբարձութեան մի քանի անդամնե-րից: Տրվեցան արդէն ներկայացումները յօդուտ դպրոցների աղքատ աշակերտներին:

Մեզ հաղորդում են Նոր-Բայազետից և հետե-ւալ լրագրը: «Չը նայելով բոլոր աշխատու-թիւններին, դեռ ես մեր քաղաքը չունեցաւ ոչ հեռագրական կապարան, և ոչ էլ ապակեա (դե-դատու): Թէ այս հաստատութիւնները որքան անհրաժեշտ են ընտելիչների համար, աւելորդ եմ համարում քաղաքից: Այս ձեռքը ցրտի սասա-կութիւնը չափ ու սահման անցաւ. Սեանայ լի-ճը պիտք ստացելով, միջոց տուեց իր վրայով սահմաններով երթնելութիւն անելու: Յրոյ պատ-ճառով վայրենի թռչունները տեղի ու տեղը սառչում են և այդ պատճառով այս տարի քա-ղաքի բնակիչներն առատութեամբ ենք վայե-լում թռչունների միւր և շատ էփան ենք առ-նում այդ կերակուրը»:

«Кавказ» լրագիրը հաղորդում է որ թիֆլիսի քաղաքային Գումայի մէջ խնդր յարուցվեցաւ թիֆլիսի Նաթլուխ ասիական արուարձանի մօտ եղած նաթլի աղբիւրները քաղաքային հաշուի հե-տախօզելու անհրաժեշտութեան մասին: Լուր ենք որ այդ հարցի յարուցանողները մի քանի պա-րոններն են, որոնք հաստատեցան են քաղաքի ներ-կայացուցիչներին որ նաթլի այդ աղբիւրների արդիւնաշահելը շատ չափաւոր գործ կը լինի քա-ղաքի համար, բայց իսկապէս նրանց նպատակը հետեւալն է. թող քաղաքը իր հաշուով մեծ ծախ-սեր անի հետախօզութիւնների վրա, իսկ իրանք կը սպասեն հետախօզութիւնների հետեւանքների: Եթէ հետախօզութիւնները աջող հետեւանքներ կունենան, նրանք կառաջարկեն քաղաքին յանձն առնել աղբիւրների արդիւնաշահութիւնը, եթէ ոչ—իս քաղաքի զանաւարանը միայն կը կորցնի մի յայտնի քանակ, իսկ իրանք ոչինչ կորուստ չունեն: Շատ ճարպիկ բան է քաղաքի հաշուի հետախօզութիւններն անել, որպէս զի վերջը իրանք կազմեն ընկերութիւնը, որ լաւ օգուտներ կունենայ: Լա թէ վատ կը լինի հետախօզու-թիւնների հետեւանքը—պարոնները մի կօպէկ չեն ծախել սկզբնական աշխատանքների վրա: Այդ և այդ տեսակ շատ ուրիշ բաներ անուա-նում են. ուրիշի ձեռքերով չափանակները կրակից հանել:

ԱՌԱՅԻՍՈՒՑԻՑ մեզ գրում են: «Ամեն հայաբնակ քաղաքից զանգառներ են լսվում թէ հայ հասա-րակութիւնը անտարբեր է դէպի ազգային և հա-սարակական գործերը: Բայց ես կարծում եմ որ ոչ մի քաղաք այն աստիճան անտարբեր չէ դէպի ամեն ազգային և հասարակական, մասնաւոր դե-պի լուսաւորութեան գործը, որքան Ախալցխան: Գաղութները ամենաթշուառ գրութեան մէջ են մեզ մօտ, ազգային գումարները կորչում են, եկեղեցա-պատկան կառուանները անխնայ թողնված են, այլ և այլ կատարվող դեղուհները չափը աննկարա-գրելի է: Հրաշագործութիւն պէտք է թշուառ ակալցիլայիններին թմրութիւնից սթափեցնելու և կատարեալ անվտանգ նրանց բարձրացնելու հա-մար»:

Մեզ գրում են ՆՈՒՍԻՍՈՒՑ: «Այս տարի, ինչպէս ձեռ յայտնի է, «Մշակը» շատ բաժանորդներ ունի մեր քաղաքում, այն ինչ անցեալ տարիներ ձեռ լրագիրը շատ շատ մի երկուս, երեք մարդ էին ստանում այստեղ: Բայց ստանից առաջիկայ ժամանակները պէտք էր համոզել նոսրեցնելներին լրագիր կարդալու, իսկ այժմ նա որ ստանում է «Մշակը» պարծնում է դառնում, իսկ ով որ չէ ստանում, իր հարեանից թերթը վերցնում է և կարդում»:

Թիւրքաց Հայաստանից եկած մի պարոն պատ-մում է մեզ որ Աղբալի կողմերում քիւրդերը այս վերջին ժամանակները անասելի կերպով կատա-ղիւ են: Նրանք անդադր յարձակվում են հա-յոց գիւղերի վրա, պատմում է մեզ յիշեալ ակա-յոց գիւղերի վրա, պատմում են տանում են, շտեմարան-նաւերը, կենդանիները, յարգանքները այրում և առ-նելով անտարբեր մեծ կոտորածներ անելուց յետոյ, կրկին իրանց սարերն են քաշվում: Տեղական թիւրք պաշտօնականներ ոչ թէ միայն չեն հալածում ու չեն պատժում աւաղակներին, բայց, ինչպէս երեւում է նրանցից ունեք աշխարհ մասնակցում են քիւրդերի գործում ու բաժանում են նրանց և քիւրդերի համար, մի հայ աւաղակը, մօտեւում, օրինակի համար, մի հայ գիւղացուց զոգացած երկու եղեր և մի կով տե-ղական միւսթեմարիֆի գումում գտնվեցան: Բայց ոչ որ, ի հարկէ, չէ վտանահարում մի խօսք ան-գամ ասել»:

«Тифл Общественн» լրագրում կարգում ենք հետեւալը: Ամբողջ քաղաքը խօսում է այժմ այն գաղափարի յանցանքի մասին, որ այս օրից պատահեցաւ թիֆլիսի Կովկաս ասիական Պօլիցիական օֆիցեր Գալուստովի դիտող զանկեցաւ կտոր կտոր արած մի տակաւի մէջ, Կուր գետի կտորները է կարծել որ այդ սպանութիւնը կատարել է ոչ թէ մի մարդ, այլ երեք աւաղակ ներք մի ամբողջ խումբ: Ռուս լրագիրը ասում է որ Գալուստով թողել է Խօթ անդամներից բաղկա-յած մի ընտանիք: Լրագիրը առաջարկում է, յո-ղուտ այդ չքաւոր և դժբաղդ բնամակեր մի ներ-կայացում կամ կոնցերտ տալ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻԱ

Կ. Պօլիտ. Corresp. լրագրին գրում են հետևեալը յունիարի 27-ից: Թիւրքիան աշխատում է կամ անհամաձայնութիւն սերմանել Ֆրանսիայի և Անգլիայի մէջ, կամ լուծել եղիպտական խնդիրը եւ քաղաքական պետութիւնների միջամտութեան օգնութեամբ: Մինչև այժմ Բ. Կրանը չաջողվեցաւ դիպլոմատական բանակցութիւններ սկսել այդ առարկայի վերաբերութեամբ: Այնպիսի և ոչ Ֆրանսիան մինչև այժմ չը պատասխանեցին Թիւրքաց կառավարութեան շրջաբերականին եղիպտոսի վերաբերութեամբ: Ինչ կը վերաբերի միւս պետութիւններին, Թիւրքաց զեականները զանազան մայրաքաղաքների մէջ աշխատում էին պատասխան ստանալ Բ. Կրան շրջաբերականին, բայց այդ մինչև այժմ նրանց չաջողվեցաւ: Միայն Բերլինից Ստադուլ-բէյ հեռագրեց սուլթանին, որ Կրանին հանդիպելու հարցը լուծելուց առաջ սպասում է Ֆրանսիայի և Անգլիայի պատասխանին: Իսկապէս դործը բոլորովին այլ կերպարանք ունի: Ստադուլ-բէյ բոլորովին չէ տեսել իշխան Բիսմարկին, միայն հարց է առաջարկել կոմս Հալլեյին, որ նրան պատասխանել է, թէ Թիւրքիան եւրոպական պետութիւնների կարծիքն իմանալուց առաջ պէտք է ստանայ Ֆրանսիայի և Անգլիայի պատասխանը: Եւրոպական պետութիւնները անգամ յայտնել է, որ Անգլիան և Ֆրանսիան ցանկանում են պահպանել status quo եղիպտոսի մէջ: Բայց դրա համար, նրա կարծիքով հարկաւոր է, որ արեւմտեան պետութիւնների և եղիպտոսի մէջ կապված դաշնակցները անգլո-ֆրանսիական վերահսկողութեան մասին ոչնչացրած չը լինեն: Բացի այդ անգլիացիները այն կարծիքն են, որ, եթէ եղիպտոսը մինչև անգամ խախտել այդ դաշնակցը, այնուամենայնիւ եւրոպական պետութիւնները իրաւունք չեն ունենայ մասնակցել արեւմտեան այն պետութիւնների միջամտութեանը, որոնց հետ դաշնակցութիւն կապված է: Այնքան է, որ վերջին տեսակետին շատ բան կարելի է պատասխանել, որովհետեւ միտոստակ, բայց այնու ամենայնիւ հետաքրքրված են եղիպտական գործերով: Վերջին ժամանակներում Իսմէնի մէջ ապստամբութիւնը անհանգստացնող բնուրութիւն է ստացել այնպէս որ Թիւրքաց կառավարութիւնը երկիւղ է կրում արդեօք նա կարող է պահպանել սուլթանի իշխանութիւնը արաբական այդ նահանգի մէջ: Համարձակ բաղրախնդիրները օգուտ են քաղում արաբական ցեղերի ֆանատիկոսութիւնից և ագիտութիւնից յիպոխոսական նըպատակների համար: Իսմէնի մէջ հանդուստեթիւնը վերականգնելու համար Բ. Կրանը ստիպված կը լինի խիստ միջոցներ գործադրել: Նոյն լրագրին Կ. Պօլիտ. Corresp. գրում են: Կամբեստայի միջնադարութեան անկումը մեծ ուրախութիւն պատճառեց սուլթանի պալատի մէջ: Այնքան Կամբեստայի աշխատանքները յօգուտ յունական խնդրի, որքան նրա մի ձառը, որի մէջ նա կասկած յայտնեց սուլթանի ընդունակութիւնների մասին, սուլթանին զրգուեց Կամբեստայի դէմ: Ֆրանսիական միջնադարութեան փոփոխութեան առաջին հետեւեքն այն եղաւ, որ սուլթանի պալատը կատարեալապէս փոխեց իր դիրքը Ֆրանսիայի վերաբերութեամբ: Եւրոպական

վայերը՝ Լրագրին սկսեց աւելի չափաւորութեամբ խօսել Ֆրանսիայի մասին: Լրագրին յայտ է յայտնում, որ «Ֆրանսիա արշաւանքի գլխավոր զրգուի» հեռանալը ազդեցութիւն կունենայ Ֆրանսիայի քաղաքականութեան վրա: Ֆրանսիա մէջ և կարելի կը դարձնէ Թիւրքիայի և Ֆրանսիայի համաձայնութիւնը: Չը նայելով այս հանգամանքին, Ֆրանսիայ փախչողները սուլթանի հրամանով ուրախութեամբ ընդունվում են Տրիպոլիսի մէջ և արժանանում են զանազան ընծաներին: Այդ բանը կատարվում է հակառակ ֆրանսիական հիւպատոսի բողոքներին:

ՉԵՐՆՈՂՈՐԻԱ

Չերնոգորիական իշխան Նիկոլայի Կանտլովիչը մէջ մնալու և այդտեղ կայացած զինուորական ժողովի մասին ցետի-նիէից «Polit. Corresp.» լրագրին գրում են: Յունկարի երկրորդ կէսին Կանտլովիչը զի մէջ կայացաւ վաղուց սպասված զինուորական ժողովը, որ պատերազմաւոր և քաջ չերնոգորցիների համար մեծ նշանակութիւն ունի: Այդ ժողովի ժամանակ պէտք է պատերազմական գործեր վճռվեն և մի և նոյն ժամանակ վերջին պատերազմի պատճառով օժիցներին և զանազան հրամանատարների պարագ մնացած պաշտօնները պէտք է բաժանվեն: Այդ ժողովին ներկայ դնուցանւ 250 օժիցները և հրամանատարներ, բացի այդ բազմաթիւ զանգառաւորներ և այնպիսի անձինք, որոնք ցանկանում էին ստանալ վերոյիշեալ պաշտօնները, այնպէս որ այդ ժողովի ընթացքում Կանտլովիչը մէջ հաւաքվել էին զրեթէ բոլոր չերնոգորցիների ներկայացուցիչները:

Իշխան Նիկոլայ յունիարի 18-ին և 19-ին հաւաքեց զաշտի մէջ բոլոր եկաններին և կարգաց նրանց իր զրած կանոնադրութիւնը, որ մեկնում էր Չերնոգորիայի պաշտպանության կոչումը և նրա պահանջները խաղաղ ժամանակ: Մեր նախորդների հին լեռնային արիւնքների մէջ, ապա մէկ կանոնադրութեան մէջ, մենք անյաղթելի ենք: Բայց զաշտում բազէի թիւերը անգոր են: Մենք պէտք է սովորենք, սովորենք պատերազմի համար, մանաւանդ խաղաղութիւնը պահպանելու համար, որ մեզ անհրաժեշտ է մեր գոյութեան պահպանելու և մեր քաղաքակրթութեան զարգացման համար: Մի տեղ իշխանը մեծ համակրութեամբ խօսում է Խուսաստանի և Հանգուցալ կայսր Ալէքսանդր Ռ-ի հետ ունեցած դաշնակցութեան մասին և յայտ է յայտնում, որ այժմեան Թագաւորն էլ չի զլնայ չերնոգորցիների համար իր սերը և բարեհաճութիւնը: Մի ուրիշ տեղ նոյնպիսի ջերմութեամբ իշխանը խօսում է այն շնորհակալութեան մասին, որ պէտք է զգայ չերնոգորիական ժողովուրդը դէպի աւստրո-ունգարական հզօր պետութիւնը և դէպի նրա մեծահոգի Թագաւորը: Կանոնադրութիւնը կարգաւորեց յետոյ իշխան Նիկոլայ մի ձառ արտասանեց: Նա յիշեց չերնոգորցիների մէջ պատահած անցքերը և ասաց, որ Չերնոգորիայի համար անհրաժեշտ է կատարել իր միջազգային պարտականութիւնները և երախտագէտ դանդի դէպի աւստրո-ունգարական կառավարութիւնը, որ մի քանի անգամ ցցեց է տուել Չերնոգորիային իր բարեհաճութիւնը և բարեկամութիւնը: Չերնոգորիայի մէջ, ասաց իշխանը, շատ մարդիկ կան, որոնք ասում են: Մենք միշտ օգնել ենք հերցեգովինցի մեր եղբայրներին և այժմ էլ պէտք է օգնենք նրանց: Բայց ես ձեզ կասեմ: Մենք այլ ևս ոչինչով պար-

տական չենք հերցեգովինցի մեր եղբայրներին, որոնց ես նոյնքան եմ սիրում, որքան ես դուք: Աւստրո-ունգարական Թիւրքիա չէ և այժմեան Չերնոգորիան էլ այն չէ, ինչ որ առաջ էր: Աւստրո-ունգարական արդարացի է և մեզ բարեկամ: Եթէ հերցեգովինցիները ապստամբվում են զինուորական ծառայութեան մասին օրէնքի պատճառով, աւելի վատ նրանց համար: Այ մի երկիր չէ կարող զոյգութիւն ունենալ առանց պատերազմական ոյժերի: Այդ ձառը արտասանելու ժամանակ ներկայ էր աւստրո-ունգարական ներկայացուցիչ զեական Գեյմբեր: Հետ իշխանը բարեկամաբար էր վարվում: Անտիվարի ուղեւորվելուց առաջ իշխան Նիկոլայ սխալ տեղեկութիւնների տարածման առաջն առնելու նպատակով հրամայեց զինուորական ժողովը երկու մասերի բաժանել, որոնցից մէկը տեղափոխել Անտիվարի, իսկ միւսը Պօդգորիցա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագրին հաղորդում է, որ ապստամբութիւնը լեռնային ստատիկ երկրի է ցցել պարտում: Չերնոգորական միջնադարը անյապաղ 200,000 ֆունտ տեղբնիւ պիտ է պահանջում, բայց յայտնի է, արդեօք կարելի է այդքան դուրս մարել: «Standart» լրագրին թղթակիցը Կ. Պօլիտ. հեռագրում է յունիարի 24-ից, որ այստեղ կարծում են, թէ Թիւրքիան համաձայնութիւն կայացրեց Կրանին: Աւստրիայի հետ անգլո-ֆրանսիական աղիցողութիւնը հաւատարմաւորութեամբ: «Daily News» լրագրին յունիարի 24-ից Ալեքսանդրիայից հեռագրում են: Ահա արդէն կրեօր է, որ արաբների փոխորդի է: Աւստրիական յարաբերութիւնը Ալեքի ջրանցքի վրա դադարած է: «Presse» լրագրին յունիարի 26-ից Հաւստից հեռագրում են, որ Կարիւրալի իրան աւելի լաւ է դուրս: Բիւլիլիները հաւատացնում են, որ նա կառուցանայ, բայց դեռ էլ արդեօք են նրան այցելուներին ընդունել: «Post» լրագրին յունիարի 26-ից Վիեննայից հեռագրում են, որ Կարիւրալի ստացաւ: Բուսիններին Կարիւրալի վրա էլ չարունակում են կալանաւորել: Ներկայումս 30-ից մինչև 40 «Կառնաւորներ» են կալանաւորված: Ինչի մէջ են նրանց մեղադրում, դեռ յայտնի չէ: Լվովիան լրագրիչները ստատիկ մուկ կերպով են դրում պանալովիտական և ուստական զանազան ձեռքառնների մասին և մինչև անգամ խօսում են «հակաաւստրիական աղիտայի մասին»: Այդ ի հարկէ, մէկ ատիթ է պետական յանցանքի մէջ մեղադրելու համար, որովհետեւ ուստաց Կարիւրալի պատկերն ունենալը և բուսինների ուղեգրաւորութիւնը ընդունելը չէ կարող պետական յանցանք համարվել: Բիւլիլի բարձր չը շանդակում լուծւում են այդ կալանաւորութիւնների մասին: Բայց լանդտագի անգամներին մէջ այն կարծիքն է տիրում, որ այդ դուրը շատ մեծացնում են լեռնայինները, իրանց նպատակների համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի, յունիարի 27-ին (փետրվարի 8) հարապային Ֆրանսիայի կանն քաղաքում, կրկնապես և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեցաւ իրանանայի հաշակաւոր զորդ Բէրտոլդ Ա ու էրբալ: Նա ծնվեցաւ 1812 թ. Վիլլուէմ քաղաքի Նոյնգաւէ գիւղում, ինչպէս ծնողները: Սկզբնական կրթութիւնը հրեական ուսումնարանում և Շտուտգարտի զինանախարար վերջացնելուց յետոյ, նա Տիւրինիայի համալսարանը մտաւ, որ սկզբից իրաւաբանական գիտութիւններով էր պարագրում, իսկ վերջը, Կաթիլ Սարաւալի խորհրդով և աղիցողութեան տակ, իրան բոլորովին փոխօրհանգում: Նուրից: Այդ նպատակով նա տեղափոխվեց Միւնխեն, և յետոյ Հելդելբերգ, որ այն ժամանակ Շլէսինգ և Կառլսը պրոֆէսորները բազմաթիւ ուսանողներ էին գրում: 1836 թ. Վալդրախ առաջին անգամ գրականական ասպարէզ դուրս եկաւ և մէկ բրոշիւր հրատարակեց «Հերմիթիւն»

և նորագոյն գրականութիւն» վերնագրով, որի մէջ կատարել կերպով պաշտպանում և զովարանում է հրեաներին: Մի և նոյն նպատակով հետեւաւ տարին նա մէկ վեպ գրեց «Spinoza» վերնագրով, իսկ 1839 թ. Վիեննայի տեսաւ Ալեքսանդրի հեղինակութիւնների նրա թարգմանութիւնը հին հատորներով: Մի և նոյն տարում հրատարակեցան նրա առաջին վեպերը «Սիլվի մարկիզան» և «Ինչ է բաղդը», որոնց մէջ նա աշխատում էր ընդհանրացնել և հասկանալի դարձնել փոխառյալական դասականները: Մի և նոյն տարում է գրված և «Կրթված քաղաքացի» հեղինակութիւնը: Մի և նոյն ժամանակին են վերաբերում Աւստրիայի առաջին փորձերը ծանոթացնել ընթերցող հասարակութիւնը զեական կեանքի հետ, զեականութիւնների և տանջանքների հետ: Նրա առաջին քայլը այդ ասպարէզի վրա մեծ համակրութեամբ ընդունվեցաւ թէ հասարակութիւնից և թէ կրթականից և միանգամայն հաշակեցաւ ոչ թէ միայն Կրանին, այլ և ամբողջ Եւրոպայում: Մի և նոյն յաջողութիւնը չունեցան նոյն ոգով գրված նրա մնացած հեղինակութիւնները, մասամբ այն պատճառով, որ քառասուն թուականների վերջերս գերմանացի լոկալայի գրուկ չունէին և մասամբ նրա համար, որ այդ դուրսածքները առաջվայ թարմութիւնը չունէին, բայց ուսումնարանական շատ խմատութիւն էին սրբունակում իրանց մէջ, պատմութիւնը ստատիկ ձգձգված էր, իսկ ոճը չափից դուրս արհեստական: Այդպիսով նրա «Պրոֆէսորա՛հ» վեպը աշխարհի վրա չունեցաւ, այն ինչ Բիւլի Պէլէ, Գիլի: «Կաղաք և գիւղ» գրաման, որի բովանդակութիւնը ամբողջապէս վերջված է այդ վիպասանութիւնից, բայց որի մէջ վերջինի բոլոր պակասութիւնները հեռացրած են, ամբողջ Կրանինայի մէջ մեծ աջողութիւն ունեցաւ: Յեղափոխութեան ժամանակ Աւստրիան քաղաքականութեամբ սկսեց պարապել, ճառեր էր խօսում պանալովիտների դէմ և անաշուղ փորձ արաւ դրելով «Անդրեաս Զօֆեր» գրաման: Առհասարակ գրամատիկական բանաստեղծութեան մէջ Աւստրիան յաջողութիւն չունեցաւ: 1851 թ. նա գրեց «Նոր կեանք» անունով բաները, որի մէջ նկարագրում է Կրանինայի դրությունները յեղափոխութիւնից յետոյ: Չը նայելով այդ բանին մէջ եղած մտքերի և հայեացքների առատութեամբ, կրթական պատմութեան անկապ լինելու պատճառով խտութեամբ վերաբերեցաւ դէպի նրան, և այդ հանգամանքը դրեց Աւստրիային կրկին դիւրական կեանքից վեպեր գրել: Նրա «Barfusselle» (1856 թ.), որը համարւաւ բոլոր լեռնային թարգմանված է, «Joseph im Schnee» (1861) և «Edelweiss» (1873) վեպերը մեծ աջողութիւն ունեցան, չը նայելով որ դրանք այն թարմութիւնը և ընդհանրութիւնը չունեն, ինչպէս զեական կեանքը նկարագրող նրա վեպերը: Աւստրիայի առաջին քաղաքականութեան արժանի են «Բարձրութեան վրա», որի մէջ գիւղերի կերպով ցցեց է արված զեական կեանքի և պալատական կեանքի մէջ եղած հակադրականները: «Աւարանոցը Բէյնի վրա», որը չափից դուրս շատ մանկավարժութիւն, հոգեբանութիւն և էստետիկա է պարունակում, և «Waldfried»: Աւստրիայի հեղինակութիւնների լիակատար ժողովածուն հրատարակվեցաւ 1864 թ. Շտուտգարտում:

Վերջին միջոցական ժողովրդագրութեան համումատ, լծողունում ներկայումս հաշոււ են 3,489,530 բնակիչներ, որոնցից 1,633,221 արական սեռին են պատկանում և 1,856,209 իգական սեռին: Փաղաքը 31,597 հեկտար կամ 316 քառակուսի կիլոմետր տարածութիւն է լուծում: Փողոցները 1,500 անգլիական մղոն կրկնութիւն ունեն, իսկ ջրանցքների երկարութիւնը 2000 մղոնից անցնում է: Այդ անպին տարածութեան վրա չինված են 417,956 տներ:

Վերջին ժողովրդագրական միջոցութիւնից յայտնվեցաւ, որ Նիւ-Եօրկի աղաքնակութիւնը 1,206,222 հոգուց է բաղկացած, որոնց թիւում 18,952 նոյններ են, 727,629 տեղացիներ, 29,767 անգլիացի, 198,595 իրանացի, 8,683 չեռնադարացի, 9,910 ֆրանսիացի, 12,223 իտալացի, 9,020 լեռնացի, 4,551 ուսանող և 153,482 զերմանացի և աւստրիացի:

Խորագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՏԱՔԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևանեան հրապարակի վրա քաղաքային կառավարչի նորոգութեան պատճառով թղթի վաճառութիւնն ՅԱՆՆԵՍ ՏԵՐ ՍԱՐԳՍԵԱՆԻ տեղափոխուած է ժամանակաւորապէս փետրվարի 13-ից մինչև 10-ն մարտի 1. Ա. ԶՈՒԲԱՆՈՎԻ ՏԱՆԸ Առևտրական բանկի տակ, իսկ մարտի 10-ից մշտական առևտուր կը տեղափոխվի Գօրջօվի փողոցի վրա և Ե. Զուբարովի տան, Երևանեան հրապարակից 5-դ համար:

2—3 (1)

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ
քան թէ՛ ուրիշ տեղ. Թէ՛, կահաւ, ՇՈՎՈՒՄԻ, բիսկիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոկալներ, թէյ, յամաններ, սուզօղներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, Երես լուսնալու ամաններ, ԿՈՂՊԵՐՆԵՐ, ԶԵՆՍԱԿԱՆՆԵՐ, գլուխներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, իւղի, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈՂԵՐՆԵՐ, մշտականներ, կէտիկա, ԹԱՄԲԵՐ, անանի, ուլիտներ, ՄԱՆՃԱՍԱՆՆԵՐ, Երեսքներ, թաշկինակներ, կանանց գուլարներ, մարդկերանց գուլարներ, առաւել տապօն, հոտաւէտ ջրեր, շերտեր, ցիտրան մազնեգիտ, խնայի գինի, պօրտփէյն, խերս, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՒՄԻՆ: ՆՈՅՆ ՏԵՐԸ փաճառականներին ՄԵԾ քանակութեամբ ծախում է թէ՛ Ե. պուրթերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆուտերով 1 ր. 1 ր. 10 ր. 4., 1 ր. 20 ր., 1 ր. 40 ր., 1 ր. 60 ր. և 1 ր. 80 ր., իսկ ամենաբարձր թէյը ֆուտեր 2 ր. քաշը ԱՌԱՆՑ Թղթի:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէկօլիքներ 4—34 ր., ԲՈՒՂԻՊՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շէֆիլդի դանակներ 3 ր. 50 ր. գիւժիկներ, ալբոմներ կիսագնով, ֆիլարաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէկօլիքների Թիֆլիսում:

95—100

ԱՐԴԵՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող ՎՈՒՉԵՏԻՉԻ «ДВѢ ЕЛКИ» մանկական գրքուկի հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ» անունով:

Այս գրքուկը ընդունել էր տպագրելու Հայերէն գրքերի հրատարակչութեան ընկերութիւնը: Բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու: Տպագրված է Հայտընի թղթի վերայ խոշոր տարբերով:

Գինն է 20 ԿՈՊԵԿ:

Կարելի է ստանալ թէ՛ կենսաբանական գրադառանոցից և թէ՛ Թարգմանողի՝ հետեւեալ հասցեով:

Тифлис—на Авлабарту Ивану Петровичу Назарянцу.

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԶՍՏԻԿ գլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 ր., բրեւներ 4 ր., բիշակներ 8 ր. ամբողջ հազուստ 13—19 ր., զրապ, մահուտ, արիւտ, արբիներ և այլոց կէս գնով: Հնդկական բրինձ 6 ր., սագօ և պերլօպայ կրուպ 9 ր., պանիր շատեր 70 ր., նշտայ կօլմանի 18 ր. ֆուտեր, լուծողական ձեթի պիլիւլներ 2 ր., լուսնի փոշի 5 ր.: **ՆՈՐՈՒԹԻՒՆ:** Մեղրամմ և արծաթէ մոմեր 35 և 42 ր. ֆուտեր: Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեւանեան համար 4 ր., մեծերի համար 12 րուրուց: **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:**

10—36

«ԲԵՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»

Այս ֆերմայով բանալով երևանում գրափաճառանոց՝ կցելով նորա հետ ուսումնական, դիւանական, նկարչական և կազմարական իրեղենների խանութ, յանձն եւ առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից եւանի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի գիւնասաններին և ուսումնարաններին շատ ձեւաւոր գնելով և պայմաններով:

Ընդունում եմ տպագրել տարւ բանկներ, ծանուցադրեր, յայտարարութիւններ, այցեւտմաներ, բրօշուրներ, նաև գրքեր, ամենատրաման վարձով:

Ինձ մօտ է գտնվում իմ հրատարակած «Տային բժշկական մարմնամարդութեան» գրքուկի պահեստը:

Իմ հասցեն. Գ. Զրиванъ. Н. Симео-нанцу, магазинъ. «Другъ-Дѣтѣй».

Ա Ն Ա Հ Տ

Հին ԶՐՈՑ ԳՐԵՑ ՂԱԶԱՐ ԱՂԱՑԵԱՆՑ Գինն է աճեն տեղ ուղարկելով 50 ԿՈՊ.

10 օրինակից աւելի գնողներին 20% զեւոն կը լինի:

Պահեստը գտնվում է Թիֆլիզ մեր տպարանում: Կարելի է ստանալ և Թիֆլիզի հայ գրադառանոցից:

Խոնարհաբար կը խնդրեմ այն մեծ օտարաքաղաքացի պարոններին, որոնց ուղարկված է վերջինեալ գրքերից փաճառելու համար, թող բարեհաճին գումարը փոխով մեզ ուղարկելու: Նոյնպէս եթէ կը գտնվին և ուրիշ քաղաքներից փաճառելու համար ներդրելուն յանձն առնող պարոններ, թող յայտնեն իրենց կամքը՝ մեք շնորհակալութեամբ կուղարկենք նոցա վերջինեալ գրքերից: Հասցեն մեր տպարանի անունով: Մովսէս Վարդանեանց 3—6

ԽԱՒԻԱՐ առաջին տեսակի 70 ր. նոսր խաւիար առաջին տեսակի 1 ր. 20 ր., շորի համար շէտակներ 30 ր., բազկաթոռ-մահճակալներ 10, 14 և 18 ր.: Որեւում կը ստացվի **ՊԱՆԻՐ** շատեր 60 ր., ֆուտեր: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՒՄԻՆ:** 6—10

Այս տեսակ ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ IV և V գրքուկը «Երկու վէպիկ» Անդերսենից, «Սոխակ» և «Խոզարած», գին. 20 ր., առաւել գին՝ Երեւան. Բեռ. «Мелу» Тугану Назарянцу.

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 ր. համար, 12,000 խրուստալի բաժակներ 25 ր. համար, 10,000 բոկալ և բաժակներ 10 ր. համար, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 ր. համար, 10,000 տետր 8—40 ր. համար, 10,000 պիւրիներ 5 ր., 5,000 շիշ պօրտփէյն և խերս 1 ր. համար, 2,000 արշին կլէտիկա 60 ր.—2 ր. արշինը, 2,000 գիւժիկ մատիտներ և գրչակոթեր 8 ր. գիւժիկը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 ր. ֆուտեր, 1000 ֆուտեր լէպէտիկա 50 ր. ֆուտեր, 600 անգլիական բէկօլիքներ և 4—34 ր. համար, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. համար, զրապ, արիւտ, ալբոմներ, ձեւաւոր պալտօներ, գլխարկներ, վարդիներ, հագուստ կէս գինով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՒՄԻՆ:** Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուրթ 2 ր. 50 ր. 53—60

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր., ծալող աթոռներ 1 ր. 50 ր., ՓԱՑՑ-ԱՌՈՒ 4 ր., ԲԱԶԱՌՈՒՄ-ՄԱՆԿԱՆ 10 րուր և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 ր., միաման քորոցներ 50 ր., պատուի ծխողների համար 60 ր. ֆուտեր, անգլիական վաճառներ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՒՄԻՆ:** 10,000 զոյգ գուլարներ 25 ր.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆՆԵՐ 30 ր.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 ր.—5 ր., 1,000 ՄԱՆԿԱԿԱՆՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բոմադէյ. 1 ր.—1 ր. 30 ր., պատուի 40 ր.—1 ր., 300 հատ բէկօլիք 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԿԱՆՈՎ, 10,000 ֆուտեր թէյ ԹԵՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 ր.: Երկուսն է գրիչներ իւրաքանչիւր ձեւի համար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՒՄԻՆ:** 84—100

ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուկիս, տ. Հախվերդեանի: Հիւանդներին ընդունում են ամենայն օր: Առաւօտեան 9—10 ր. և երեկոյան 9—10 ր. և օրը և օրը—կանոցի և ներքին հ.—10 1/2—12 ր., Շատ հազար զեւոնց—ներքին հ.—կին-բժիշկ Ս. մոյս. Լ. զիշ—կանացի հ.—երեկոյան 5 1/2—7 ր. Պալլօլ օրը—հոգեկան, ջրային և ներքին հ.—Ուշա Կ. զ.—երեկոյանց և բզի հ.—Հարաւ օրերը—առաւօտեան ծաղիկահատութիւն.—երեկոյան կոնսուլտացիա (ընդհանուր բժշկական խորհուրդ): Գիշեր օրը հիւանդները: Զբաւուրներ խորհուրդը տրվում է անվարձ: Հիւանդանոցի գիրքատուր Պալլօլ օրը և օրը (հ. շ. եր). 12—7

Վերականգնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ** վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՍՍՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 րուր: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻՒՄԻՆ:**

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻՆԻՎ**, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի գէտ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն: 76—100



ՎԻՇՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատուիկաց փողոցի անկիւնում ՄԻՓԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍՆԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացի կարող են գինը այս հասցեով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову. 138—150

Въ Редакціи газеты «МШАКЪ»
Продается
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ».
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Դուրս եկաւ մեր «Мои Путевыя За-мѣтки» վերագրող նոր ուսու բրօշուր, որի մէջ նկարագրված են Արաս-Թուրան, Ախալ-ցիկ, Բորժոմ, Գուլայիս և Բաթում:

Ծախվում է Կենտրոնական գործակալութեան մէջ և պ. Զաքարիա Գրիգորեանցի, Կրոսօկի և կուրբի շէյքարների մօտ—գինն է 15 ԿՈՊ. Գարբիէլ Գ. Տէր-Գաբրիէլեանց.

Առաջիկայ 1882 թուականին Շուշի քաղաքում կը հրատարակվի հայերէն լեզուով գրականական-քաղաքական և աղջային ամսագիր

„Դ Ո Ր Ծ“

«Գործի» իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) և դուրս կը գալ իւրաքանչիւր ամսի վերջում:

Նախագիծ

ա. ժամանակագրութիւն. տեղութեան կարգադրութիւններ: Ռուսաց, արաւոսահմանի և Կովկասի կեանքի նորութիւնները:
բ. Գնական յօդուածներ հայերի և նոցա գրացի ազգերի անտեսական, բարոյական և մտաւորական դրութեան մասին:
գ. Վէպեր, մանրամէկեր, գրքեր, նկարագրութիւններ, ձանապարհորդութիւններ—ինքնուրոյն և թարգմանական:
դ. Մատենադասութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տպագրվող գրքերի, նոյնպէս այն օտար գրքերի, որոնց նիւթը հայոց ու Կովկասեան կեանքիցն է առնուած:
ե. Քաղաքական տեսութիւն:
զ. Ներքին տեսութիւն:
Մանկավարժական ժամանակագրութիւն:
ը. Այլ և այլք:
թ. Իրեւ յաւելուած եւրօպական և ուսաց ընտիր հեղինակների գրուածների թարգմանութիւն:
Յայտարարութիւններ:

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն է ամեն տեղ . . . 8 րուրի
վէջ ամսուանը 5 րուրի
երեք ամսուանը 3 րուրի

Վաճառքի տեղի է:

Օտարաքաղաքացի կարող են գինը այս հասցեով. Шуша. Симеону Ахумянъ, учителю армянской семинаріи.

Թարգմարտակիչ Սիմէոն Հախուրեանց